ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 23.01.2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 71-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Ռոման Ահարոնյանի, խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Թամարա Բաղդասարյանի, Արսեն Հարությունյանի, Պավել Գյուլումյանի, Դավիթ Վարդիկյանի, էմին Բեգլարյանի, Լիլիթ Ղազանչյանի և Ցոլակ Մարգարյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով փաստաբան Արսեն Գրիգորյանի բողոքը (մուտք՝ 16.02.2026թ. № 350-26) Պալատի նախագահի 23.01.2026 թվականի թիվ 71-Ա որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ՝

1. **Գործի նախապատմությունը**.

Արթուր Հովհաննիսյանի (**այսուհետև նաև՝ Բողոքաբեր**) ներկայացուցիչ Արսեն Գրիգորյանը, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետև նաև՝ Պալատ**), հայտնել է, որ թիվ ԵԴ2/7436/02/25 քաղաքացիական գործով իր վստահորդը հանդիսանում է երրորդ անձ, ով ներկայացրել է հայց ընդդեմ Անահիտ Հովհաննիսյանի և Երուշ Մնացականյանի:

Ըստ Բողոքաբերի ներկայացուցչի՝ ծանոթանալով գործին պարզվել է, որ 17.07.2025թ. Անահիտ Հովհաննիսյանի հայցադիմումը ներկայացրել է փաստաբան Լամարա Քոչարյանը (**այսուհետև նաև՝ Փաստաբան**), ով հանդիսանում է նաև սկզբնական հայցով պատասխանող և հակընդդեմ հայցվոր՝ Երուշ Մնացականյանի ներկայացուցիչը: Պարզվել է, որ Փաստաբանը ծանուցման հասցեն նշել է իր հաշվառման և բնակության հասցեն՝ ք.Երևան, Գ.Հասրաթյան 10շ., բն. 26 և հայցադիմումի օրինակը Անահիտ Հովհաննիսյանի փոխարեն իր վստահորդին ուղարկել է փոստով իր անունից իր

հաշվառման հասցեով:

Բողոքաբերի ներկայացուցիչը նշել է, որ Երուշ Մնացականյանի հակընդդեմ հայցում պատասխանող Անահիտ Հովհաննիսյանի ծանուցման հասցեն կրկին նշվել է Փաստաբանի հացեն: Փաստացի բոլոր ծանուցումները ուղարկվել և ստացվել են Փաստաբանի կողմից:

Բողոքաբերը ներկայացուցիչը հավելել է, որ Անահիտ Հովհաննիսյանի անունից դատարանին հասցեագրված դիմումում վերջիններիս հասցեները տարբերվել են և նշվել է Փաստաբանի հեռախոսահամարը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Բողոքաբերի ներկայացուցիչը խնդրել է փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, 23.01.2026 թվականի թիվ 71-Ա որոշմամբ (**այսուհետև նաև՝ Որոշում**) փաստաբան Լամարա Արտավազդի Քոչարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել է՝ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի բացակայության պատճառաբանությամբ:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի նախագահի</u>** <u>23.01.2026</u> **<u>թվականի թիվ</u>** <u>71</u>-**<u>Ա որոշման էությունը</u>**.

Պալատի նախագահի Որոշմամբ արձանագրվել է, որ Բողոքաբերն ըստ էության Փաստաբանին վերագրում է դատարանին գիտակցաբար կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություններ ներկայացնելու վարքագիծը:

Դիմումի և առկա ապացույցների հաշվառմամբ Պալատի նախագահի Որոշմամբ արձանագրվել է, Բողոքաբերի կողմից նկարագրված հանգամանքներն ինքնին չեն կարող վկայել Օրենքի և/կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների առերևույթ խախտման դրսևորման մասին, քանի որ Բողոքաբերի կողմից չի ներկայացվել որևէ հանգամանք, որը կհիմնավորեր կամ ողջամտորեն թույլ կտար ենթադրել Փաստաբանի կողմից որևէ խախտում թույլ տված լինելու մասին:

Պալատի նախագահի որոշման համաձայն՝ քննարկման առարկա հանդիսացող իրավիճակում, թիվ ԵԴ2/7436/02/25 քաղաքացիական գործով առանձին-առանձին ներկայացվել են երկու դատավարական փաստաթուղթ՝ համապատասխանաբար, Անահիտ Հովհաննիսյանի հայցադիմումը և Երուշ Մնացականյանի հակընդդեմ հայցը, որոնք փաստացի չեն ստորագրվել Փաստաբանի կողմից, իսկ Փաստաբանի անվան, ազգանվան և հայրանվան վերաբերյալ նշումը առկա է միայն այդ փաստաթղթերը ուղարկելու մասին փոստային անդորրագրերի վրա, ինչը փաստացի չի վկայում այն մասին, որ դրանք Դատարանին ներկայացվել են անձամբ Փաստաբանի կողմից:

Ներկայացված փաստերի շրջանակներում, Պալատը, դիտարկելով Փաստաբանի

գործողությունները, գտել է, որ ներկայացված ապացույցների հիման վրա հնարավոր չէ կատարել հետևություն Փաստաբանի վարքագծում հնարավոր խախտման հատկանիշների առերևույթ առկայության մասով, առավել ևս այն դեպքում, երբ Անահիտ Հովհաննիսյանն ընդունել է փաստն առ այն, որ ինքն է նշել Փաստաբանի հասցեն:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Բողոքաբերը Պալատի նախագահի Որոշման դեմ 16.02.2026 թվականին Պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**) ներկայացրել է բողոք՝ հղում կատարելով իր նախկին դիմումների շրջանակներում նկարագրված հանգամանքներին՝ ըստ էության պնդելով նույն դիրքորոշումը:

Մասնավորապես, Բողոքաբերի պնդմամբ, Փաստաբանը մշտապես թե Անահիտ Հովհաննիսյանի, թե Երուշ Մնացականյանի դատարան ուղարկվող և դատարանից ստացվող փաստաթղթերը ուղարկել և ստացել է ք.Երևան, Հասրաթյան 10 հասցեով:

Բողոքաբերը, կրկին անդրադառնալով Փաստաբանի վարքագծին, նշել է, որ Անահիտ Հովհաննիսյանը չէր կարող Լամարա Քոչարյանի փոխարեն փոստային բաժանմունքից ուղարկել որևէ փաստաթուղթ, ուստի՝ դա կատարվել է հենց Լամարա Քոչարյանից, ով կեղծ տեղեկատվություն է տվել դատարանին:

Բողոքաբերը խնդրել է վերացնել Փաստաբանների պալատի նախագահի որոշումը, վերադարձնել իրենից վերցված գումարը և սահմանված կարգով հարուցել կարգապահական վարույթ Փաստաբանի նկատմամբ՝ նրան ենթարկելով կարգապահական պատասխանատվության:

4. **<u>Փաստաբան Լամարա Քոչարյանի համառոտ դիրքորոշումը</u>**.

Լամարա Քոչարյանը բացատրություն է ներկայացրել Արթուր Հովհաննիսյանի ներկայացուցիչ Արսեն Գրիգորյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 23.02.2026թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ նա հանդիսանում է միայն Երուշ Մնացականյանի ներկայացուցիչը, ում հետ 13.07.2025թ. կնքել է պայմանագիր:

Փաստաբանը հայտնել է, որ սկզբնական հայցով հայցվոր, հակընդդեմ հայցով պատասխանող՝ Անահիտ Հովհաննիսյանը 2025 հունիսին եկել է փաստաբանական գրասենյակ և խնդրել այցեքարտ՝ ասելով, որ երկրից մեկնելու է և փաստաբանի կարիք ունի:

Փաստաբանի պնդմամբ, նա չի ճանաչել Անահիտ Հովհաննիսյանին և երբ ստացել է վերջինիս անունից ուղարկված ծրարները, որտեղ հայցվորի հասցեն նշված է եղել Փաստաբանի հասցեն, զանգել է Անահիտ Հովհաննիսյանին պարզաբանում ստանալու համար: Անահիտ Հովհաննիսյանը հայտնել է, որ այցեքարտից գրել է Փաստաբանի

հասցեն, քանի որ ՀՀ-ից բացակայելու էր, և որ Երուշ Մնացականյանին ուղղված հայցերը ստանա նրա ներկայացուցիչը:

Նշել է նաև, որ Անահիտ Հովհաննիսյանը 31.12.2025թ. մուտք է գործել ՀՀ և 24.01.2026թ. դուրս է եկել, և այդ ընթացքում գրավոր բացատրություն է գրել, որը կցել է դիմումին, ինչպես նաև դիմել է մեկ այլ փաստաբանի՝ Արմենուհի Առաքելյանին՝ լիազորելով իր շահերի պաշտպանությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

5. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Փաստաբան Լամարա Քոչարյանի և Երուշ Մնացականյանի միջև 13.07.2025թ. կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի առարկան պատվիրատուի ներկայացուցչությունն է՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու հարցով: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված պայմանագրի պատճենի ուսումնասիրությամբ:*

2. Անահիտ Հովհաննիսյանը 2025թ. դեկտեմբերի 31-ից 2026թ. հունվարի 24-ը գտնվել է ՀՀ-ում: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված՝ Անահիտ Հովհաննիսյանի անձնագրի պատճենով:*

3. Անահիտ Հովհաննիսյանը փոստային բաժանմունքում նշելով Լամարա Քոչարյանի անունը՝ դատարան է ուղարկել մի շարք փաստաթղթեր, իսկ իր ծանուցման հասցեն ևս նշել է Լամարա Քոչարյանի հասցեն: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված՝ Անահիտ Հովհաննիսյանի 18.01.2025թ. բացատրությամբ:*

4. Անահիտ Հովհաննիսյանը 19.01.2026թ. լիազորել է փաստաբան Արմենուհի Առաքելյանին՝ ներկայացնելու իր իրավունքներն ու օրինական շահերը: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված լիազորագրի պատճենով:*

4. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>**.

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 39.11-**րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն**՝ *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:***

Օրենքի 39.11-**րդ հոդվածի** 9-**րդ մասի համաձայն՝** *Փաստաբանների պալատի նախագահի՝ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) ***փաստաբանների պալատի նախագահի որոշումն անփոփոխ թողնելու մասին.***

2) փաստաբանների պալատի նախագահի որոշումը վերացնելու մասին:

Օրենքի 39-**րդ հոդվածի** 1-**ին մասի համաձայն՝** *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, իսկ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու համար՝ կարգապահական, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված պատասխանատվության:*

Օրենքի 39.1 **հոդվածի** 1-**ին մասի** 1-**ին և** 2-**րդ կետի համաձայն՝** *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ (…) նույն օրենքի և/կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1 **հոդվածի** 6-**րդ մասի համաձայն՝** *փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.3-**րդ հոդվածի** 1-**ին մասի** 1-**ին կետի համաձայն՝** *կարգապահական վարույթի հարուցումը մերժվում է,* ***եթե՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են***:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ ***Օրենքով սահմանված հիմքերի առերևույթ առկայության դեպքում***: Ընդ որում, ի թիվս այլնի՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է հանդիսանում նաև Օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ: Ընդ որում, ***այն դեպքում, երբ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են, ապա փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը ենթակա է մերժման***:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից նաև հետևում է, որ կարգապահական վարույթի հարուցման համար անհրաժեշտ է հանգամանքների այնպիսի համակցություն, որոնք արտաքուստ, առանց դրանց ըստ էության քննության, ողջամիտ կասկած են հարուցում փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ:

Հետևաբար՝ կարգապահական վարույթի հարուցման հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին Բողոքաբերի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների կամ փաստերի վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք կվկայեն փաստաբանի կողմից հնարավոր կարգապահական խախտումը կատարելու մասին:

Խորհուրդը, ուսումնասիրելով բողոքը, դրան կից ներկայացված նյութերը, Փաստաբանի բացատրությունը և գործում առկա տվյալները, գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոքի բովանդակությունից հետևում է, որ Բողոքաբերի ներկայացուցիչը վիճարկում է այն հանգամանքը, որ թիվ ԵԴ2/7436/02/25 քաղաքացիական գործի շրջանակում հայցվոր Անահիտ Հովհաննիսյանի ծանուցման հասցե է նշվել Փաստաբանի հասցեն, իսկ հետագայում դատավարական փաստաթղթերն ու ծանուցումները փաստացի ստացվել են Փաստաբանի կողմից: Բողոքաբերը նաև պնդում է, որ նշված հանգամանքները վկայում են դատարանին կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն ներկայացնելու մասին:

Խորհուրդը նախ արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծանուցագիրն ուղարկվում է դատավարության մասնակցի նշած հասցեով՝ որպես ծանուցման հասցե, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով կարգավորվում է ֆիզիկական անձի դեպքում դրա հանձնման կարգը: Այսինքն՝ դատարանը դատական ծանուցումների առաքումն իրականացնում է այն հասցեի հիման վրա, որը հաղորդվել է իրեն դատավարական փաստաթղթերով կամ գործի նյութերով: Սակայն տվյալ իրավակարգավորումից ինքնին չի բխում, որ եթե դատավարական փաստաթղթերում նշված հասցեով ուղարկված ծանուցումները կամ այլ դատավարական փաստաթղթերը փաստացի ստացվել են Փաստաբանի կողմից, ապա այդ հանգամանքը ինքնաբերաբար պետք է գնահատվի որպես դատարանին կեղծ տեղեկություն ներկայացնել:

Բացի այդ, գործի նյութերում առկա է նաև Անահիտ Հովհաննիսյանի գրությունը՝ այն բովանդակությամբ, որ վերջինս ինքն է նշել Փաստաբանի հասցեն: Խորհուրդը գնահատում է, որ նշված բացատրությունը էական նշանակություն ունի բողոքի փաստական հիմքերի ստուգման տեսանկյունից, քանի որ դրանով առնվազն կասկածի

տակ է դրվում այն թեզը, թե Փաստաբանը սեփական նախաձեռնությամբ իր տվյալներն է օգտագործել դատավարական հաղորդակցության նպատակով: Միաժամանակ Բողոքաբերի կողմից չեն ներկայացվել այնպիսի բավարար և համոզիչ ապացույցներ, որոնք կհերքեին այդ բացատրությունը կամ կհաստատեին հակառակը:

Խորհուրդը նաև հաշվի է առնում Բողոքաբերի մատնանշած այն հանգամանքը, որ դատավարական փաստաթղթերը փաստացի ստացվել են Փաստաբանի կողմից: Այնուամենայնիվ, այդ փաստը, նույնիսկ եթե ընդունվի որպես հաստատված, ինքնին դեռևս բավարար չէ կարգապահական խախտում արձանագրելու համար: Դատավարական փաստաթղթերի ստացման փաստը չի նույնացվում դատարանին կեղծ տեղեկություն ներկայացնելու հետ, եթե բացակայում են տվյալներ առ այն, որ այդ փաստաթղթերը ստացվել են առանց որևէ իրավական կամ փաստական հիմքի, կամ որ այդ միջոցով դիտավորությամբ խաթարվել է մյուս մասնակցի՝ գործի ընթացքի մասին տեղեկացված լինելու իրավունքը: Սույն դեպքում նման ուղղակի և բավարար տվյալներ բողոքի նյութերով չեն ներկայացվել:

Նույնը վերաբերում է նաև այն փաստարկին, թե առանց լիազորագրի հնարավոր չէր իրականացնել համապատասխան փոստային առաքում կամ ստացում: Խորհուրդը գտնում է, որ այդ պնդումը վերաբերում է առավելապես առաքման կամ հանձնման տեխնիկական և ընթացակարգային կողմին, սակայն ինքնին չի ապացուցում, որ դատարանին հաղորդված տեղեկությունը կեղծ է եղել կամ որ Փաստաբանը գործել է դատարանին մոլորության մեջ գցելու դիտավորությամբ:

Խորհուրդը վերահաստատում է, որ կարգապահական պատասխանատվության հարցը չի կարող լուծվել ենթադրությունների կամ միայն կասկածների հիման վրա: Դրա համար անհրաժեշտ են այնպիսի բավարար փաստական տվյալներ, որոնք առերևույթ բավարար հիմքով կվկայեն մասնագիտական վարքագծի կանոնների խախտման մասին: Սույն դեպքում չի հաստատվել, որ Փաստաբանը դատարանին ներկայացրել է ակնհայտ կեղծ, իրականությանը չհամապատասխանող կամ էապես ապակողմնորոշիչ տեղեկություն, ինչպես նաև չի հաստատվել, որ դատավարական փաստաթղթերի ստացումը Փաստաբանի կողմից հանգեցրել է գործի քննության խեղաթյուրման կամ որևէ մասնակցի դատավարական իրավունքների էական սահմանափակման:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Բողոքաբերի կողմից նկարագրված հանգամանքներն ինքնին չեն կարող վկայել Օրենքի և/կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների առերևույթ խախտման դրսևորման մասին, քանի որ նրանց կողմից չի ներկայացվել որևիցե հանգամանք, որը կհիմնավորեր կամ ողջամտորեն թույլ կտար ենթադրել Փաստաբանի կողմից որևէ խախտում թույլ տրված լինելու մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Բողոքաբերի դիմումում նկարագրված հանգամանքները չեն կարող հիմք հանդիսանալ Պալատի նախագահի Որոշման վերացման համար, ուստի այն մնում է անփոփոխ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 1-**ին մասի**, 39.11-**րդ հոդվածի** 3-**րդ մասի և** 9-**րդ մասի** 1-**ին կետի պահանջներով**,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 23.01.2026 թվականի «Փաստաբան Լամարա Քոչարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 71-Ա որոշման դեմ Արթուր Հովհաննիսյանի ներկայացուցիչ Արսեն Գրիգորյանի կողմից 16.02.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:
2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 23.01.2026 թվականի թիվ 71-Ա որոշումը:
3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Ռոման Ահարոնյան**

16 մարտի 2026թ.
թիվ ԿԳ/06-Ա
ք. Երևան